ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան, Նալբանդյան 104

«__05__» _____02_____2024թ.

N ___1____

ՈՐՈՇՈՒՄ

«ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից) (ՀՎՀՀ 00522502, գործունեության հասցե՝ ք. Երևան, Երկաթուղայիններ 4փ 2/6) 24.12.2023թ.-ին մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/1-ՏՆՏ1» ծածկարգով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի շրջանակներում:

«ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/1-ՏՆՏ1» ծածկարգով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի շրջանակներում Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2024 թվականի հունվարի 8-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 5.1-րդ կետի համաձայն՝ արձանագրվել է, որ Մասնակցի հայտում առկա է անհամապատասխանություն հրավերով նախատեսված պահանջների նկատմամբ: Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի նիստը կասեցվել է և Մասնակիցին տրամադրվել է մեկ աշխատանքային օր՝ մինչև Հանձնաժողովի նիստի կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Մասնակցի կողմից Համակարգով (eauction.armeps.am) անհամապատասխանության շտկում տեղի չի ունեցել, ինչով պայմանավորված 2024 թվականի հունվարի 23-ի կայացած Հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության 2.4.-րդ կետի համաձայն՝ Մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Հարկ է նշել, որ Հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունը, ինչպես նաև գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը 2024 թվականի հունվարի 25-ին հրապարակվել են ՀՀ ֆինանսների նախարարության գնումների համակարգ՝ «gnumner.am» պաշտոնական տեղեկագրում:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ **մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու**

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ **գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ **գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,** և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Նույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ **եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը** կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, **ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում**:

Այսպիսով՝ Պատվիրատուն արձանագրում է, որ Մասնակիցը «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/1-ՏՆՏ1» ծածկարգով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի շրջանակներում գնման հայտի հավելված 1-ով հայտնել է, որ ներկայացնում է հրավերի պահանջներին համապատասխանող հայտ, ինչը սակայն չի համապատասխանել իրականությանը և սահմանված ժամկետում Մասնակցի կողմից չեն շտկվել անհամապատասխանությունները: Նշվածով պայմանավորված Մասնակիցը խախտել է գնման գործընթացի շրջանակում իր կողմից ստանձնված պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին Մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը, 6-րդ հոդվածի 2-րդ մասը, ինչպես նաև Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետը՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը՝ Պատվիրատուն, որոշում է Մասնակից՝ «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊ ընկերությանը (ՀՎՀՀ 00522502, գործունեության հասցե՝ ք. Երևան, Երկաթուղայիններ 4փ 2/6) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ա. Հակոբյան